

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ա. Խ. Հ. Առաջարկահույրիան ժողովրդական Կոմիտեիան
Հանրամասչելի գրադարան. Գրքույկ № 3.
Առ-ՀՀՄՌՀՅՐԸԿԵԴԻՑՈՒ. ԲՅԺՆԻ ՊՈՂԻՑ-ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՆԹՈՐԸԸՆ

616.9
15-16-

ՄԱԼԱՐԻԱ

(ԴՐԱՆԵՐՈՅՑ)



610
131

ՅԵՐԵՎԱՆ

1925 թ.

121 JUN 2013

616.3
5-16 ԱՐ

Հ. Ս. Խ. Հ. Սովորապահության ժողովրդական Կոմիտարիատի
Հանրականացի գրադարան. Գրքույկ № 3.
ԱՆ-ՀԱՄԱՀԱՐԱԿԵԴԻՏՈՒ. ԲՈՒՆԻ ԱՌԵՏ-ԼՈՒԾՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՆԹԵԲԵՐԻՆ

04 AUG 2010

610
131-ՄԱ

1003
1024

ՄԱԼԱՐԻԱ

(ԴՐԱԿԱՆԻՑ)



ՏԵՐԵՎՈՆԻ

1925 թ.

7707

ՄԱԼԱՐԻԱ

Ի՞նչ ԲԱՆ Ե ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Վարակիչ կոչվում են այն հիվանդությունները, վարոնք անցնում են հիվանդից առողջին:

Ի՞նչ ԲԱՆ Ե ՎԱՐԱԿԸ

Յուրաքանչյուր վարակիչ հիվանդություն ունի իր վարակիչ վարք շատ փոքրիկ և հասարակ աչքով անտեսանելի մարմնիկներ են և կոչվում են մանրեներ:

Մանրեն մեկ բժիջից ե բաղկացած. նրան տեսնելու համար հարկավոր է մեծացնել 1000 կամ ել ավելի անգամ:

Ամեն մի վարակիչ հիվանդություն ունի իրեն հատուկ մանրեն:

Առանց մանրեյի վարակիչ հիվանդություն չի լինում:

ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ ՄԱՆՐԵՆԵՐԸ ՅԵՎ Ի՞ՆՉՈՐԵՍ ԵՆ ԱՆՑ-ՆՈՒՄ ՀԻՎԱՆԴԻՑ ԱՌՈՂՁԻՆ

Նայած թի ինչ անսակ վարակիչ հիվանդություն ե. կան հիվանդություններ, վարոնց մանրեները գտնվում են հիվանդի արյան մեջ, որին. մալարիա, բծավոր ախֆ ևային. կան հիվանդություններ, վարոնց մանրեները գտնվում են հիվանդի թուքի կամ խորխի մեջ, որին. թոքախտը. իսկ վորովայնի ախֆի մանրեները գտնվում են հիվանդի կրկանքի և նրա միզի մեջ:

Կան հիվանդություններ, վարոնց մանրեներն անցնում

հեն հիվանդից առողջին շնչառության միջոցով, հազի միջոցով, որին թոքախա. կան հիվանդություններ, վորոնց մանրեներն անցնում են վարակված ուտելիքի և խմելիքի միջոցով, որինակ՝ վորովայնի տիֆ, խոլերա, կան և այնպիսի վարակիչ հիվանդություններ, վորոնց մանրեներն անցնում են հիվանդից առողջին միջատների կծելու միջոցով, որինակ՝ բծավոր տիֆ, մալարիա և այլն:

Ի՞նչ է ՄԱԼԱՐԻԱՆ

Մալարիան ամենքին հայտնի գողերոցքն ե, վորն ուրիշ անուն յեկա ունի՝ ճահճային տենիք, վորովիտեակ նա տարածված ե ճահճու և խոնավ տեղերում: Մալարիան գոյություն ունի շատ վաղուց, նա լավ հայտնի յեր հին ժամանակներում:

Առաջ մարդիկ կարծում եյին, վոր գողերոցքը վատ ողից ե լինում, ճահճու տեղերի ողը վատ ե և զրա համար ել անունը դրեցին մալարիա, վորը նշանակում ե վատ ող:

Բայց գիտությունը ջրեց այդ սխալ կարծիքը:

1894 թվին մեկ ֆրանսիացի բժիշկ գտավ մալարիայի մանրեն (մակարույծ-պարազիտը) և այն որվանից հայտնի դառավ, վոր մալարիան վարակիչ հիվանդություն և:

ՎՈՐՔԱՆ Ե ՏԱՐԱԾՎԱԾ ՄԱԼԱՐԻԱՆ

Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ մալարիայով հիվանդանում են տարեկան 5 միլիոն մարդ, իսկ մնացած բոլոր վարակիչ հիվանդություններով՝ 11 միլ. վեց հարյուր հազար մարդ, այսպես վոր մալարիան կազմում ե բոլոր վարակիչ հիվանդությունների համարյակեսը:

Մալարիան իր թվով մնացած բոլոր վարակիչ հիվանդությունների մեջ բանում ե առաջին տեղը:

Մալարիան ամենից շատ տարածված ե այն յերկրնե-

րում, վորտեղ ճահճներ շատ կան, որինակ՝ Հայաստանում, Սրբութի հոգում:

ՄԻԱՅՆ ՃԱՀՃՈՒ ՏԵՂԵՐՈՒՄ Ե ԼԻՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՆ

Վոչ. մալարիան առհասարակ տարածված ե այնպիսի տեղերում, վորտեղ կանգնած ջրեր կան, մինչեւ անգամ ամենափոքր տարածության ջրեր:

Բացի այդ, մալարիան շատ և տարածված ե ծանր լնթացք ունեցող զետերի ծանծաղուտների մոտերքում:

ԲՈԼՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Թուչունները և յեղջյուրավոր մեծ կենդանիներն ունեն իրենց մալարիան, վորն ունի իրեն հատուկ մանրեն. այս վերջինը գողերոցքի մանրեյին նման չե և նրա տված հիվանդությունը մարդու գողերոցքից ջոկնվում ե:

Մարդու գողերոցքով ուրիշ կենդանիներ չեն հիվանդանում:

Ի՞ՆՉՈՒՄ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Մալարիայի մանրեն բնկնում և մարդու արյան մեջ, շտա շուտ սկսում և աճել ու բազմանալ:

Աճման ժամանակ մանրեն արտազրում ե թույն և թունավորում ե մարդուն, վորը և այդ թույնից հիվանդանում ե:

Ի՞ՆՉՈՒՄ Ե ՄԱՐԴ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ


Մալարիան պատկանում ե այն վարակիչ հիվանդություններին, վորոնք վարակում են հիվանդի արյունը և անցնում հիվանդից առողջին վոչ թե սկի միջոցով, վոչ թե ուտելիքի կամ խմելիքի միջոցով, այլ միայն մոծակի կծելու միջոցով:

ԱՄԵՆ ՄՈՇԱԿ ԿԱՐՈՂ ԵՎ ՎԱՐԱԿԵԼ ՄԱՐԴՈՒՆ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ


Վոչ, մալարիա տարածող մոծակը բոլորովին ջոկ և
և զանազանվում եւ ուրիշ մոծակներից:

Բացի այդ, պետք է իւսանալ, վոր մալարիան տարա-
ծում եւ եղ մոծակը:

ՄԱԼԱՐԻԱ ՏԱՐԱԾՈՂ ՄՈՇԱԿԻ ՆՇԱՆՆԵՐԸ ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ



Նկար 1.



Նկար 2.

Այս նկարների վրա գետեղված են մալարիա տարա-
ծող մոծակի և հասարակ մոծակի պատկերները:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՆԱՏՈՒՄ ՆՐԱՆՔ

Նախ և առաջ աչքի և ընկնում այդ յերկու մոծակի
նստելու ձիք:

Մալարիտ տարածող մոծակը նստում է պատի վրա պոչի
կողմը բարձր պահած, իսկ զլուխը պատին կպած, այնպես
վոր մոծակը կպած է պատին թեք գծով և պատի հետ կազ-
մում է անկյուն (նկար 1):

Իսկ մյուս տեսակի մոծակը նստում է պատի վրա
կուցած և պատին կպած է կոր գծով (նկար 2):

Յերրորդ նկարի վրա մենք տեսնում ենք յերկու
մոծակի կյանքը ճահիճում:

Ի՞ՆՉՊԵ՞Ս ԵՆ ԶՈՒ ԱՄՈՒՄ

Թե մեկը և թե մյուսը ձու յեն ածում կանգնած
ջրերի յերեսին, լինի նա ճահիճ, կամ շատ փոքր չափով
կոմոդնած ջուր. մինչեւ անգամ նրանք կարող են ձու տ-
ժել վոչ արտգ զնացող ջրի յերեսին:


Հասարակ մոծակը ձվիկներն ածում է կույտ կույտ,
ձվիկների կույտերը միացած են միմյանց հետ և փոքր
նավակի տեսք ունեն, իսկ մալարիա տարածող մոծակը
ձվիկներն ածում է հատ հատ և միմյանցից զատ զատ:

Յուրաքանչյուր եղ մոծակ ածում և 150 ձու. մի
ամառվա ընթացքում մի մոծակը մի քանի միլիոն սե-
րունդ ե տալիս:

Ի՞ՆՉ ԲԱՆ Ե ԹՐԹՈՒՐԸ

Ձվից անմիջապես մոծակ չի դուրս դալիս. Մի քա-
նի որից հետո ձուն դառնում է թրթուր:

Ապա նայեցեք այդ յերկու մոծակների թրթուրի
վրա. Սովորական մոծակի թրթուրը ընկղմված է ջրի մեջ



Նկար 3.

զլուխնիվոյիր, իսկ պոչի կողմբ բարձր և ջրի մակերեսութին կպած և միայն պոչի կողմբ. իսկ մալարիա տարածող մոծակի թրթուրը ջրի մեջ պատկռմ և հորիդոնական գծով, ջրի մակերեսութին կպած և ամբողջ մեջքով: Թրթուրից անմիջապես մոծակ չի զուրս զալիս, թրթուրը դանում և հարսնյակ նկար 3:

Ի՞նչ ԲԱՆԵ ՀԱՐՍՆՅԱԿԸ

Մեկ կամ յերկու շաբաթից հետո թրթուրը դանում և հարսնյակ:

Ով տեսել և շերամի փորդը, նու զիտհ՝ ինչպես սեմից զուրս և զալիս փորդը՝ թրթուրը ու ինչպես մի փորդ ժամանակից հետո փորդը՝ փաթաթվելով կոկոնի մեջ, զանում և հարսնյակ, փորդ հետո զանում և թիթեն և կոկոնի միջից զուրս թոշում իր ժամանակին:

Նույնպես և մոծակի թրթուրը դանում և հարսնյակ, թրթուրը կուչ և զալիս, փաթաթվում շապկով և 2-4 որ հարսի պես քողով ծածկված և մնում, հետո զայնում և մոծակը, փորդ, պատուելով իր քողը, զուրս և թոշում ջրի յերեար:

Յերկու մոծակների հարսնյակները զանազանվում են միմյանցից զիտակուրծքի (կուչ յեկոծ մասի) յերկարության և լայնության չափով:

Ի՞ՆՉՊԵՍ Ե ՄՈՇԱԿԸ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՄԱԼՈՐԻԱՆ ՀԻՎԱՆԴԻՑ ԱՌՈՂՁԻՆ

Եզ մոծակը, կծելով հիվանդին, ծծում և նրա արյունը և նրա հետ միասին մալարիայի մանրեն անցնում և մոծակի ստամոքսը:

Մոծակի մարմնի մեջ մալարիայի մանրեն բեղմնավորվում և և ապա և հունգ, փորդ մնում և մոծակի մարմնի մեջ տուանց մի փորհե վկաս հասցնելու մոծակին:

Մանրեցի հունգն անցնում և մոծակի թքի դեղձի մեջ:

Մանրեյի հունդ պարունակող մոծակը կծում և առողջ մարդուն և խայթելիս իր կնճիթի միջոցով փոխազրում է իր թքի հետ և նրա մեջ զանգող մանրեյի հունդը, վորը և վարակում է առողջին:

Բացի մարդուց և մոծակից ել ուրիշ վոչ մի կենդանու մեջ մալարիայի մանրե չի զանգել. մինչեւ անզամ ողի մեջ, ջրի մեջ կում մի վորեե այլ աեղ մալարիայի մանրե չի զանգած:

ԿԱՐՈՂ Ե ԱՐԴՅՈՒ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԱՄԵՆ ՄԻ ՄՈՇԱԿ ՎԱՐԱԿԵԼ ՄԱՐԴԻՆ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Ի հարկե վոչ, մալարիայով կարող և վարակել մարդուն միայն այն մոծակը, վորը պարունակում է իր մեջ մալարիայի մանրեն, վորն առողջին կծելուց առաջ ձձել և մալարիայով մի վորեե հիվանդի արյուն մալարիայի մանրեյի հետ միասին:

ՎՈՐՏԵՂ Ե ԱՊՐՈՒՄ ՄՈՇԱԿԸ

Մալարիա տարածող մոծակն առհասարակ տպրում և կանգնում ջրերի մոտ, լճերի, լճակների, ջրափառերի մոտ, վորովհետև միայն կանգնած ջրի յերեսին ենա ձռւ ածում: Առհասարակ այս մոծակը կանգնած ջրերից հեռու չի առդրում. բարձր տեղեր թռչել չի կարող միայն քամին և նրանց քշում հեռու տեղեր:

Պարակների առուների ափի մոտ, վարակող ջրի ընթացքն այնքան ել արագ չե, նույնաղես կարող և տողել մոծակը և ձռւ ածել:

ՄԱԼԱՐԻԱՆ ԻՆՉ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԻ

Ժաղովուրդը շատ լավ վորոշել և այդ հիվանդությունը: «Դողերոցք» խոսքը պարզ վորոշում է մալարիայի նշանը այսինքն՝ հիվանդն ունենում է զող ու հետո երոցք (տաքություն):

Մոծակի կծելուց 8-14 որ հետո սկսվում է հիվանդության առաջին նշանը, այնպես վոր վարակվելուց հետո անցնում է 1 կամ 2 շաբաթ ու հետո յեւ սկսվում հիվանդությունը:

ԻՆՉՈՒ ՅԵ ԱՅԴԹԵՍ

Վարակվելու առաջին օրը մալարիայի մանրեն դեռ չի ազգում: Մի վորոշ ժամանակ է հարկավոր, վոր նա բազմանա և թույն արտազրի. բանի վոր թույնը պակաս է, հիվանդը վոշինչ չի զգում, բայց հենց վոր մանրեները շատանում են, թույնն ել շատանում և ու զրանից հիվանդանում է մարդը: Այդ ժամանակամիջոցը, վորը ակում և վարակվելու որից մինչեւ հիվանդության յերեալը, կոչվում է զաղանի շրջան:

ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱՆԻՑ ՀԵՏՈ Ի՞ՆՉ Ե ԼԻՆՈՒՄ

Հիվանդը դեռ չը տկարացած. մի յերկու որ վատ և զգում, մարմինը կոտրատվում է, արամազրությունը վատ, ախորժակ չունի, յերբեմն զլուխն ե ցավում, զգում ե ընդհանուր մարմնի թուլություն և զրկվում ե քնից ու հանգամից:

Այս զրություն մեջ հանկարծ սկսվում է գողը, վորը և կազմում է մալարիայի առաջին շրջանը:

Յերբեմն գողը շատ թեթև և լինում, հիվանդը միայն սառառու և զգում մարմնի մեջ, յերբեմն սրափոց, յերբեմն միայն ձեռքն ու վատքն և սառչում. բայց յերբեմն այնքան խիստ ե լինում զողը, վոր հիվանդի առամները միմյանց են կպչում, շարժվում ե մահճակալը, վորի վրա պառկած ե հիվանդը, վերմակներն ամենեն չեն սպնում հիվանդին, զողը չի անցնում, և այդպես մի քանի ժամ:

ԴՈՂԻՑ ՀԵՏՈ Ի՞ՆՉ Ե ԼԻՆՈՒՄ

Գողն աստիճանաբար պակասում է, հիվանդն սկսում է տաքանակ, սկսվում է երոցը, տաքությունը, վորը

կազմում և մալարիայի յերկրորդ շրջանը, տաքությունն սաստիճանաբար բարձրանում է, հիվանդն այրվում է, վառվում և հնացի պես, զլուխը ցավում է, յերեմի զիտացավն ու տաքությունն այնքան խիստ են լինում, վոր հիվանդը զառանցում է:

Մի քանի ժամից հետո տաքությունն սկսում է իջնել, հիվանդի զրությունը բարձրանում է և սկսում է քրոնիկ թրամբի սկավելը ցույց և տալիս մալարիայի յերրարդ շրջանը:

ՎՈՐՈ՞ՆԲ ԵՆ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՆՇԱՆՆԵՐԸ

Վերը զրածից պարզ է, վոր մալարիայի նշաններն են զող, տաքությունն և քրոնիկը, այս բոլորը սկսում են մեկ կամ մեկուկես որ, վոչ ավելի և այս յերեք նշանները միասին կազմում են մալարիայի մեկ նոպան:

ՄԵԿ ՆՈՐԱՅՈՎ ՎԵՐՋԱՆՈՒՄ Ե ԱՐԴՅՈՔ ՄԱԼԱՐԻԱՆ

Առաջ, յերեմին հետեւալ որը, կամ մեկ՝ յերկու որ անց միհնուցն ժամին, ինչպես և առաջին անգամը, սկսվում է զողը, վորից հետո զալիս և տաքությունը ու հետո քրոնիկը և այդպես կանոնավոր կերպով կարող է շարունակվել շաբաթներ, ամիսներ, և վորքան շտակը կը կրնի մալարիայի նոպաներն, այնքան շտակ և թուլանալու հիվանդը և այնքան շտակ և մաշվելու նոտ:

ՊԱՏՃԱՌԻՆ Ի՞ՆՉ Ե

Բանիք նրանումն է, վոր մի քանի ահսակ մալարիա կտ, ամենից շատ լինում է որը մեջ բանող ահսակը, վորը կոչվում է յերեքորյա մալարիա, բայց կա և յերկու որը մեջ բանողը, վորը կոչվում է չորեքորյա մալարիա:

Թողերոցքի սկավելու պատճառը մալարիայի մանրեների զարգացումն է, քանի վոր մանրեները զարգացած չեն, վոշինչ չըկա, հենց վոր զարգանում են ու լցվում:

արյան մեջ, սկսվում է գոցերացքը, կան մանրեներ, վոր որը մեջ են զարգանում և որը մեջ է լինում զողը, կան մանրեներ, վորներ յերկու որը մեջ են զարգանում և զրահամար ել հիվանդությունը յերկու որը մեջ է լինում:

Յերեմին որը մեջ զարգացող մանրեների մի մասը զարգանում և մեկ որ առաջ, կամ մեկ որ հետո, այն ժամանուկ զողերոցքն ամեն որ և լինում:

Յուրաքանչյուր ահսակ մալարիայի մանրեն ունի իր արտաքին ահսակն և իր համելությունները:

ՄԱԼԱՐԻԱՅԻ ՄԱՆՐԵՆ ՈՒՐԻՇ ԵԼ Ի՞ՆՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

Կան հաղվագյուտ մարդիկ, վորներ վարակվում են մալարիայով, բայց չեն հիվանդանում, նրանց արյան կարմիր գնդիկներն այնքան ամեն են, վոր մալարիայի մանրեն չի ազդում նրանց վրա, արյան մեջ ընկած մանրեն շտակ շտակ վոչնչանում և և անհետանում:

Բայց կան և այնպիսի մարդիկ, վորներ մի անգամ հիվանդանալոց հետո շարունակում են պահել իրենց մարմնի մեջ մալարիայի մանրեն, վորն յերեմին զուրու և զալիս իր թագուի աեզից և, բնինելով այրան մեջ, սկսում է նորից աճել ու բազմանալ, առաջ բնինելով մալարիայի նոր նոպա, և այսպես անվերջ, մինչեւ հիվանդի բոլորովին առողջանալը կամ նրա մահը:

Այս ահսակ մալարիան կոչվում է զաղանի, կամ կրկնվող մալարիա:

ՈՒՐԻՇ Ի՞ՆՉ ՏԵՍԱԿ ՄԱԼԱՐԻԱ ԿԱ

Բացի վերը նկարագրված ահսակներց կա և մալարիայի արտագիր ահսակը:

Պատերազմից առաջ այս վերջին ահսակը մեզ մոտ չկար: Պատերազմի ընթացքում անզիվական զորքի հնդիկները բերեցին իրենց հետ արտագիր մալարիան: Հիշութ զինվորները վարակեցին մեր մոծակներին այդ մա-

լարիայի մանրեներսվ. մոծակներն ել իրենց հերթին տղեցին այդ մալարիան մեզ:

Տքոսպիք մալարիայի մանրեն նույնպես շատ փոքր ե և չի բաղմանում տեղական մալարիայի մանրեյի պես, դրա համար ել տրոպիք մալարիան ընթանում ե այլ կերպ:

Բացի այդ, արոտիք մալարիան ընթանում ե շատ ծանր, տեսում ե յերկար, գժվար ե բժշկվում և շատ հաճախ զլորում ե հիվանդին զերեզման:

ՄԱՐԴՈՒ ԻՆՉՆ Ե ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Մալարիան մարդու մարմնի մի մասի հիվանդություն չե, այլ ամբողջ կազմվածքի հիվանդություն ե:

ԻՆՉ ՓՈՓՈՒՌԻԹՅՈՒՆՆԵՐ Ե ԼԻՆՈՒՄ ԱՐՅԱՆ ՄԵԶ

Մարդու արյան ամենազլիսավոր ե ամենատպեաքառիան մասը կարմիր գնդիկներն են, փորոնք սնունդ են մասակարարում մարդու կազմվածքի բոլոր մասերին:

Բանն ել նենց այն ե, վոր մալարիայի մանրեն արյան մեջ ընկնելուց հետո քնակություն և հաստատում արյան կարմիր գնդիկների մեջ, սնունդ ե նրանցով և քայլայում ու վոչնչացնում նրանց:

Մալարիայի ամեն մի նոսպա կապ ունի մանրեների բազմանալու հետ. ամեն անդամ, յերբ մանրեները՝ բազմանալով այրան կարմիր գնդիկների մեջ, քայլայում, պատռում են գնդիկը և թմռվում արյան հունի մեջ, այդ ժամանակ հենց սկսվում ե մալարիայի նոսպան:

Կարմիր գնդիկի միջից գուրս յերած նոր մանրեները մանում են ուրիշ առողջ մնացած գնդիկները մեջ և դրանց ևս փշացնում. այնպես վոր մանրեները բազմանալիս ամեն անդամ նորանոր կարմիր գնդիկներ են վարակվում նրանցով և փշանում:

Այդ պատճառով կարմիր գնդիկների թիվը որեցոր պակասում ե, իսկ դրա հետևանքը լինում ե այն, վոր հի-

վանդի մարմնի մասերի սնունդը վատանում ե, հիվանդին արյունազակասություն կոչվագ տկարությունն և ստանում: Հիվանդն որեցոր մաշվում, զեղնում ե և ստանում ե մի այնողիսի տեսք, վոր հեռվից անզամ կարելի յե ջոկել՝ թե նո հիվանդի ե մալարիայով:

Նիհար ու գեղին գեմքով, վախտ մարմնով և ուռած փորով. ահա մալարիայով հիվանդի տեսքը:

ՄԱՐԴՈՒ ՎՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆ Ե ԱՍԵՆԻՑ ՇԱՏ ՎՆԱՍՎՈՒՄ

Վարակված արյունը, շրջապայելով մարմնի մեջ թռւնափորում ե հիվանդի կազմվածքի բոլոր զործարանները և առաջին հերթին արյան գոյության հետ կաղ ունեցող զործարանները, այսինքն՝ այն զործարանները, վորոնց մեջ ե զոյանում արյան կարմիր զնդիկները:

Այդ զործարանների թիվն ե պատկանում վայձաղը:

Յերբեմն նենց մեկ նոպայից հետո վայձաղն ուռչում ե և մեծանում: Առողջ մարդի փայծաղը կողերի տակից գուրս չի զալիս, իսկ մալարիայով հիվանդի փայծաղը, մանավանդ յերկար ժամանակ հիվանդի փայծաղը կողերի տակից գուրս ե զալիս, համնում ե պորտին և մինչեւ անզամ նրանից ել ներքի: Դա հերթի չե: Փայծաղը մեծանում ե վոչ թե միայն յերկարությամբ, այլ և լայնությամբ. հիվանդացած փայծաղը գուրս ե զալիս ձախ կողերի տակից և համնում ե փորի աջ մասին. փայծաղն ուռչում ե և մեծանում ե այնպես, վոր մի մեծ սեխի տեսք և ստանում. մեծացած փայծաղի քաշը համնում ե մի քանի զրվանքայի: Մեծացած փայծաղի շնորհիվ հիվանդի փորին ուռչում ե, վորից և խանգարվում ե վորովայնի զործարանների կանոնավոր զործունեությունը:

ԱՐԴՅՈՒ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՆ ՅԵՎՍ ԽԱՆԳԱՐՎՈՒՄ ԵՆ

Այս մալարիան, իբրև արյան հիվանդություն, հարվածում ե մարդու մարմնի բոլոր զործարանները, նույն իսկ

և ներփային համակարգությունը: Բացի այդ, յերկար տևող մալարիայի դեպքում վնասվում են բյարդը, սիրար, և յերիկանունքները: Այս յերեք դրութանահերթ մեջում մեկի խանդարման դեպքում հիվանդը ջրդող կոչվող տկարությունն է ստանում:

Այս ակարությունները և խանդարութերը բոլորն եւ դժվար լուծելի յեն:

ՄԱՐԴՈՒ ՎՈՐ ՀԱՍԱԿՈՒՄՆ Ե ԼԻՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՆ

Մալարիայի համար վարոշ հասուհին սկսած առաջին սրից մինչև ամենափոք ծերության հասուկը մարդ կարող է հիվանդանալ մալարիայով: Գա բավականիչ: Մալարիայով հիվանդ հղի կնոջ արդանդի պառազն ել կարող ե վարակիլ մոր արյունից մալարիայով և ծնվել մալարիայով հիվանդ: այդ ահասակ հիվանդ պատուզը հղիության լրբիվ ժամանակին չի հասնում և շատ շուտ վիճվում է: Վարակած մոծակը ումը կծեց, նա ել հիվանդանալու յե, անկախ այն բանից թե քանի առքեկան է հիվանդացոքը: իսկ հղիության դեպքում վարակվում է մինչև անզամ գեռ շճնված զավակը, ի հարկե, ոս վոչ թե մոծակի կծելուց, այլ իր մորից, վորին կծել և մոծակն է վարակել:

ՈՎ Ե ԱՎԵԼԻ ՇԱՏ ՏՈՒԺՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅԻՑԻ

Վարքան յերիտասարդ է հիվանդը, վորքան նա ուժեղ է, վորքան լով պայմանների մեջ և առըսում հիվանդը, այնքան թեթև և լինում նրա մալարիան: Իսկ ընդհակառակը, ծերությունից կամ մի այլ հիվանդությունից կամ կյանքի վատ պայմաններից թուլացածների մալարիան ընթանում է շատ ծանր և մեծ վնասութեր և առաջ բերում հիվանդի կազմվածքի մեջ:

ԻՆՉՊԵՍ Ե ԸՆԹԱՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մալարիան ամենից շատ տարածված հիվանդությունն է Հայաստանում, որին ական 1924 թվին Հայաստանում յեղել են մոտ 70.000 անձ հիվանդ մալարիայով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈBLԻԿԱ ԲԱՐԵՎԱՐԱԿԱՆ
ՆԵՐԻ ՎՐԱ ՄԱՍՍԱՆԻԱՑՈՒՄ ԱՎԱ

1. Յերեանի զավառ		
2. Լենինականի զավառ	3753	
3. Եջմիածնի զավառ	1.034	
4. Փամբ. Լոռու զավառ	3189	
5. Դիլիջանի զավ.	7753	
6. Նոր-Բայազետի զավ.	745	
7. Զանգեզուրի զավ.	4245	
8. Դարալազյաղի զավ.	544	
9. Մելլու շրջան	1158	
		ԸՆԴԱՄԵՆՔ՝ 70480

ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՄԵԶ ԱՅՍ ԹՎԵՐԸ

Մալարիան ամենից շատ տարածված է Յերեանի զավառում, յերկրորդ տեղը բնաւում է Եջմիածնի զավառը, իսկ ամենավերջին տեղը Նոր-Բայազետի զավառին է պատկանում:

ԻՆՉՈՎ ԲԱՑԱՏՐԵԼ ԱՅԴ

Յեթև ընթերցողն ուշադրությամբ հետեւ և վերը զրածին, նա կարող է հասկանալ, վոր գրա պատճառը յուրաքանչյուր զավառի աշխարհագրական դիրքն ե: Այն զավառները, վորոնք ընկած են տափաստանում, մալարիա շատ ունեն: իսկ այն զավառները, վորոնք լեռնային մասումն են գանվում, մալարիա չունեն կամ ունեն շատ բիչ:

Ինչպես հայանի յե, տափարակ տեղերում ճանիճներ և կանգնած ջրեր շատ կան, իսկ լեռնային մասի հողի հատկությունն այնպես է, վոր ճանիճներ և կանգնած ջրեր չեն գոյանում: Բացի այդ, լեռնային մասի բարձր գերքը նպաստավոր չե մոծակների զոյւթյան համար:

Մի ուրիշ բան ել են ասում մեզ այդ թվերը, Հայանի յե, վոր մեղնում յուրաքանչյուր զավառ ունի լեռ-

նային և տափարակ մաս, մալարիայով հիվանդների մեծ մասը դանվում են զավառի տափարակ մասերում, իսկ լեռնային մասում կամ ամենեին չկան, կամ շատ քիչ են: Յեթե թվերը լավ քննենք, մենք կը տեսնենք, վոր Հայաստանի տափարակ տեղերի բնակիչները համարւա դիմովին հիվանդ են մալարիայով:

Չպետք ե մոռանալ, վոր ցուցակագրված են վոչ բուրով հիվանդները. բուրով հիվանդներն ել բժշկի մոտ չեն յեղել, վոր ցուցակագրված լինելին: Հաստատապես կարելի յետ ասել, վոր, յեթե մալարիայով բուրով հիվանդները դիմելին բժշկի, անային միջոցներով չբժշկվելին, այն ժամանակ մալարիայով հիվանդների թիվը շատ ու շատ ավելի կը լիներ:

Յեթե լոգունենք, վոր մալարիայով հիվանդների միայն մեկ քառորդն ե դիմել բժշկի, այն ժամանակ մենք կը տեսնենք, վոր Հայաստանում 1924 թվին կար մոտավորապես 300,000 հիվանդ մալարիայով:

Ի՞ՆՉ ԵՆՔ ՅԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ ՄԵՆՔ ՍՐԱՆԻՑ

Յեթե յուրաքանչյուր հիվանդ տիարության պատճառով կորցնե աշխատանքի 10 որ, այն ժամանակ կը տեսնենք, վոր Հայաստանի հիվանդները կորցրել են մալարիայի պատճառով 3,000,000 բանվորական որ: Յեթե հաշվենք յուրաքանչյուր հիվանդի որական աշխատավարձը մեկ ուրեմն, մենք կսականանք յերեք միլիոն ուրեմնի, այսինքն՝ 1924 թվին Հայաստանի աշխատավորությունը կորցրել ե յերեք միլիոն ուրեմնի: Այժմ հասկանալի յե՝ թե ինչու մաւրիսն մեծ գժբախտություն և հիվանդացազի համար, մեծ պատռնաս և ազգաբնակության համար և մեծ չարիք պետության համար:

Այժմ հասկանալի յե՝ թե ինչու մենք պետք ե կազմակերպվենք և պետք ե միացած ուժերով կուվենք այդ սարսափելի հիվանդության դեմ:

Հիվանդները պետք ե կովեն, վոր իրենք առողջանան

և աշխատանքից չգրկվեն. նրանք պետք ե կովեն մալարիայի գեմ, վոր ուրիշների վարակման պատճառ չդառնան: Իսկ առողջներն ել պետք ե կովեն, վոր իրենք յեվս չը հիվանդանն ե աշխատանքից չը գրկվեն: Յուրաքանչյուր տոռղծը պետք ե մոռանա, վոր քանի կան մալարիայով հիվանդներ, քանի կան մալարիա տարածող մոծակներ, ինքն ել կարող ե մի որ հիվանդանալ: Վոչ վոք ազատ չե մոծակի կծելուց, յեթե միջոցներ չը գործադրի:

Ահա այդ միջոցներին և անցնում ենք մենք այժմ:

Ի՞ՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՍ

Մենք արդեն գիտենք վոր մալարիան վարակիչ հիվանդություն ե, ապա ուրեմն նրա գեմ պետք ե կովել հենց այսպես, ինչպես բոլոր վարակիչ հիվանդությունների գեմ, այսինքն՝ վարակի գեմ:

Առաջ աշխատում եյին վարակի առաջն առնել մեկուսացնելով վասնգավոր վայրերը, խափանելով բոլոր ձանալարները, վորոնք տանում են դեպի վարակիչ հիվանդության վայրը. վարակիչ հիվանդին անպատճառ առանձնացնում եյին:

Բայց այժմ այդ ձեմ կոիվր միայն ժամանախուի համար և թողնված:

Այժմ գիտությունն այլ կերպ ե կոխվ մզում. Նա սովորեցնում ե՝ ինչպես պետք ե ապել, ինչ նիստ ու կաց պետք ե ունենալ, վորպեսզի չը հիվանդանալ:

Այժմ գիտությունը ուրիշ միտք ե հետապնդում. Նա տառում ե, վոչ թե հարկավոր ե հիվանդանոցներ հիմնել հիվանդներին բժշկելու համար, այլ հարկավոր ե այնպես ապել, վոր ամենեին չը հիվանդանաս, վոր կարիք չը լինի հիվանդանոց գիմելու և բժշկվելու:

Գիտությունը մեզ ցույց ե տվել ընդհանուր պայքարի ուղին բոլոր վարակիչ հիվանդությունների գեմ, նույնպես և մալարիայի գեմ:

Մենք գիտենք, վոր մալարիայի մանրեն բնության

մեջ չի գտնվում, նա գտնվում է մալարիայով հիվանդի արյան և սոծակների մարմնի մեջ:

Նույնպես զիտենք, վոր սոծակն է ծծում հիվանդից տրյունը և նրա միջի գտնված մանրեները ու հետո, կծելով մի ուրիշ առողջի, վարակում է առողջին. մենք նույնպես զիտենք, վոր ով մի բանի անգամ տկարացել է մալարիայով, նրա մարմնի մեջ մնում են մանրեները թագ կացած, և մի հարժար որ այդ մանրեները դուրս են գալիս իրենց թագ կացած տեղից, բազմանում են ու նորից հիվանդացնում:

Ի՞ՆՉՐԵՍ ՊԵՏՔ Ե ՎԱՐՎԵԼ

Յուրաքանչյուր առողջ մարդ վերը զրածու խոսքերը միշտ պետք ե մարում պահի և այնպես ապրի, վոր չհիվանդանա. զրա համար առողջը պետք ե նախազգուշական միջոցներ գործադրի, իսկ հիվանդը նույնպես պետք ե այդ միջոցները գործադրի, վոր ուրիշների վարակման պատճառ չը գտնա:

ՎՈՐՈՇԻ ԵՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Փորձերը ցույց են տվել, վոր մալարիայի տարածման տեղերում քինա-քինա ընդունելը առողջներին պաշտպանում է մալարիայով հիվանդանալուց:

Մայիս ամսից սկսած մինչև հոկտեմբեր ամիսը յուրաքանչյուր առողջ մարդ պետք ե ընդունի քինա-քինա, վոր զերծ մնա մալարիայից:

Քինա-քինան կարելի ե ընդունել կամ ամեն որ մանր չափերով, կամ 4-5 որը մի անգամ, բայց մեծ չափով. այնպես վոր յուրաքանչյուր մարդ պետք ե ընդունի քինա-քինան վոչ պակաս 8 դրամից, կամ 2 մախալից:

Մալարիայի ամենայեռուն շրջանը մայիսից մինչև սեպտեմբերն ե. մայիսին դարձնում են ձմեռվաքնած մոծակները, ու կծում են հին հիվանդներին, այսպես կոչ-

ված մանրեակիրներին, և կծելով առողջներին վարակում են նրանց յեվս. իսկ ամառը նոր մոծակներ են դուրս գալիս և, կծելով նախ հիվանդներին և ապա առողջներին, տարածում մալարիան:

Մոծակները կծում են յերեկոյան արև մտնելուց հետո մինչև վաղ առավոտ, ուստի քինա-քինան պետք ե ընդունել ցերեկվա ժամը 2-3-ին կամ ցերեկվա 11-12-ին, կծելուց 5-6 ժամ առաջ, վոր ներգործի մոծակի կծելուց հետո մարմնի մեջ մտած մանրեյի վրա:

Ի հարկե, քինա-քինան պետք ե ընդունել կանոնավոր կերպով և բացի այդ, պետք ե ընդունել իսկական քինա-քինա և վոչ կեղծը:

Անկանոն ընդունելը և քինա-քինայի կեղծ տեսակն ընդունելը անհաջողության ե մատնում այդ նախազգուշական միջոցը, վորը շատ մեծ նշանակություն ունի իրական կյանքում:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ՊԱՀՑՊԱՆԵԼ ԻՐԵՆ ՄՈՇԱԿՆԵՐԻՑ:

Ի՞ՆՉՐԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՄՈՇԱԿՆԵՐԻ ԿԾԵԼՈՒՑ

Այդ նպատակի համար յերկու ձև կա. մեկն այն, վոր մարմնի բաց մասերին քոռում են զանազան հեղուկներ և յուղեր:


Մոծակներն ուժեղ հոտից փախչում են. բայց այդ հոտավետ հեղուկներն ու յուղերը միայն փակ սենյակում կարելի յե գործածել, իսկ բացողյա նրանք նշանակություն չունեն, վորովհետև շատ շուտ գոլորշիանում են և զրանից ել անցնում ե նրանց գորությունը. բացի այդ, նրանք թանգ են. ամենալավը ֆրանսիական սիրիպիդարն ե, հետո մեխակի յուղը. ի հարկե, չի կարելի գործածել այնպիսի յուղեր և հեղուկներ, վորոնք գոզում են քիթը, կոկորդն և աչքերը, հազարցնում են, կամ մի ուրիշ վաս հասցնում:

ՄՈՇԱԿՆԵՐԻ ԿԾԵԼՈՒՑ ՊԱՇՏՈԱՆՎԵԼՈՒ
ՀԱՍԱՐ ԱՄԵՆԱԼԱՎԸ ՀԵՏԵՎՅԱԼՆ Ե.

ա. Հազուստը հարկավոր ե գործ ածել հաստ
կտորից և ծածկել մարմի բաց տեղերը՝ յերեսը, ձեռքերը,
մանավանդ պետք ե պաշտպանել փառները, բարակ գուլ-
պաներն ամենեվին չեն պաշտպանում մոծակների կծելուց:
Չեռքերին ձեռնոցներ պետք ե հագնել, իսկ յերեսը պետք
ե ծածկել ծածկոցով, վորը պետք ե հեռու լինի յերեսից.
հազուստը պետք ե լինի սպիտակ գույնի, վորովհետեւ
փորձը ցույց ե տվեր, վոր մոծակները մութ կտորը շատ
են պիրում, իսկ սպիտակ կտորից ընդհակառակը փախ-
չում են:

բ. Հայտնի յե, վոր մոծակները ավելի շատ կծում են
յերեկոները և տուփուոյտն մարդու քնած ժամանակը:
Յերեկոները, քանի արթուն ե, մարդ մի կերպ պաշտպան-
վել կարող ե, բայց քնած ժամանակը դա անհնար ե, այդ
ե պատճառը, վոր մարդիկ մեծ ժամանմք վարակվում են
իրենց քնած ժամանակը. ուստի հարկավոր և պաշտպան-
վել մոծակներից քնած ժամանակը:

Այդ նպատակին համելու համար անհրաժեշտ ե քնա-
կարսնի լուսամուռները պատել մետաղյա բարտկ ցանցով.
ցանցը պետք ե լայն ծակեր չունենա, վոր մոծակ-
ները չանցնեն դրսից սենյակը, ցանցի ծակերը շատ
նեղ չպետք ե լինեն, վոր ողափոխությունը շը-
խափանվի. բնակարանների դռների առաջ պետք ե մե-
տաղյա ցանցից առանձին մուտք լինել ամուր և լավ ու
հեշտ ծածկվող դռնով, վոր մոծակները դռնից չմտնեն:
Դա բավական չե, պետք ե փակել բնակարանի բոլոր անց-
քերը, որինակ՝ ողանցքները, ծինելույզները, փառարանի
անցքը և այլն...



Արագ ՑԱՆՔ ՏԱՐԱՎԱՐ


Հ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԱՆՔԱՎԱՐԱԿԱՆ

գ. Յեթե դա հնարավոր չե, պետք է քնել ծածկոցի տակ.
բարակ կտորից (թանգիֆից, մարլից կամ բարակ կտավից)
ծածկոց են կարում և արկղի պես մահճակալի վրայից
հաղցնում են: Կան այնպիսի մոծակաշատ տեղեր, վորտեղ
այդ ծածկոցը սենյակի չափ են պատրաստում և ծածկոցի
տակ են անցկացնում ամբողջ գիշերը՝ յերեկոյան մութն
ընկնելուց հետո մինչև հետեւյալ որվա առավոտը:

դ. Յեթե դա յել անհնար ե, բացողյա քնելիս պետք է
աթար վառել (տարթ) ընելու տեղին մոտ. աթարի ծու-
խը խիստ փափցնում է մոծակներին, այդ ծուխը տանել
չեն կարողանում մոծակները. և խարույկը պետք է ամ-
բողջ գիշերը վառել, վոր ողնի, հակառակ դեպքում նշա-
նակություն չի ունենա:

ե. Բայց կան տեղեր, վորտեղ մոծակներից ազատվելու
համար քնում են բարձր կտուրների վրա: Յեվ իրոք այդ մի-
ջոցը բավականին ոգնում է. դա բացարկում է նրանով,
վոր մոծակները շատ բարձր չեն՝ թոշում, բացի այդ, բար-
ձր տեղերում միշտ քամի յել լինում, քամին փափցնում ե
հեռու: Այդ տեսակետից ամենալավը բարձր պատշգամբ-
ներն են, վորոնք յերբեմն շինում են մի քանի հարկից և քա-
նի բարձր և հարկը, այսքան ապահովված են նրա վրայի
քնողները. պատշգամբը շինում են չորս բարձր ոյան
վրա. այուները ազատ են թողնվում այսինքն՝ նրանց ա-
րանքները բաց են, քամին ազատ փչում և և մոծակներին
հեռացնում պատշգամբից. բարձր տեղում քնած մարդ-
կանց հոտը չի զիազում մոծակներին և նրանք հեռու յեն
փախչում քամու շնորհիվ: Պատշգամբների (քեաթիկների)
մոտ ծառեր չը պետք ել լինեն, վորպեսզի մոծակները
նրանց ոգնությամբ չը բարձրանան վերի (տես նկար 5):

Փորձերը ցույց են տվել, վոր պաշտպանված բնակա-
րաններում ապրողները շատ քիչ են հիվանդանում մա-
լարիայով. և այժմ մալարիա ուսումնասիրող խմբերը մա-
լարիա տարածված տեղեր գնալիս ամենից առաջ հոգ են
տանում բնակարանների պաշտպանության մասին և իրոք



Նկար 5. ԲԱՐՁՐ ՊԱՏՇԳԱՄԲ (ՔՅԱՐԻԿ)

ոյս ովաշտականուղական միջոցները փրկում են առողջութեան վիճակիվելուց:

Բառավայրի մի քանի յերկաթուղագծերի վրա զիշեր ժամանակ աշխատաղ յերկաթուղար բանվորներն ու ծառայողները գործ են ածում բարակ մետաղից պատրաստված ցանցեր, ձեռնոցներ և այլն, և այդպիսով պաշտպանվում են մոծակների կծելուց, հետհապես և մալարիայով վարակվելուց:

Ներկայումս բոլոր այն ճանապարհորդները, վորոնք ճահճուտ տեղերում են ճանապարհորդում, իրենց հետ միշտ վերցնում են բարակ կտորից (թանգիֆից) կարած ծածկոց և զիշերը քնում են ծածկոցի տակ, աղատվելով բյուրավոր մոծակների խոյթելուց (նկար 6):


Մոծակները շատ սիրում են հարձակվել անավեն կենդանիների վրա: Մոծակների կծելուց աղատվելու համար կարելի յէ ոգտվել նրանց այդ հատկությունից և բնակարանին կից պահել այձ, վոչխար, և այլ կենդանիներ, վորոնց մալարիան մարզուն չեն կարող փոխանցել կծող մոծակները, սակայն այդ միջոցը այնքան ել մեծ առավելություն չունի և նրա վրա հույս դնել անկարելի յի:

Այս բոլոր միջոցներն են առավել պետք և զործագրեն հիվանդները, վորովհետեւ նրանք կրում են իրենց արյան մեջ մալարիայի վարակը, մալարիայի մանրեները:

Մալարիայով յուրաքանչյուր հիվանդ պետք և լավ պիտակի, վար ինքը մանրեակիրե, վոր ինքն և վարակում մոծակներին, և որանք ել ուրիշներին, ուստի յուրաքանչյուր հիվանդ պետք և զիտակցություն ունենա բժշկվելու և թե զգուշանալու ուրիշին վարակման պատճառ գառնալուց:

ԻՆՉՈՐԵՍ ԿՈՎԵԼ ՄԱԼԱՐԻԱՅԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԵՄ

Մենք արգեն վերն առացինք, վոր մալարիա տարածողները մալարիայով հիվանդներն են և մոծակները, ուրեմն



Նկար 6. Մալարիայի բացառություններ:

ամենամեծ ու շաղրաթյունը մենք պետք ե զարձնենք
մալարիայով հիվանդների և մոծակների վրա:

Չինէն մալարիայով հիվանդները, մոծակները չեն վա-
րսկիլի և հետհապես ուրիշ առողջներին ել չեն վարսկիլի:

Մալարիայի տարածման դեմ կուտեռու միջոցներից
մեկը մալարիայով հիվանդներին բժշկելու ե:

Յուրաքանչյուր հիվանդ պետք ե խսկոյն և եթ պի-
մի բժշկին և պետք ե բժշկին նրա ափած զեղերով և
զեկագարկի բժշկից սուսած խորհուրդներով:

Հիվանդը չը պետք ե անային միջոցներով բժշկին,
նու չը պետք ե աշխաթող անի իր հիվանդությունը, նու
պետք ե լավ իմանա, վոր ամեն մի ուշացած որ իր վրա
շատ թանգ և նստելու թե առողջության անսակեալից և
թե աշխատանքից զրկվելու անսակեալից:

Մալարիայով հիվանդը պետք ե բժշկին կանաչութոր
և յերկար ժամանակ, վոր մանրեները չը մնան նրա մոր-
թակ թագած և ամեն հարմար առիթին զուրո
զան ու նորից հիվանդացնեն նրան:

Մալարիայով հիվանդը մանավանդ պետք և բժշկին
ձմեռ, յերը մոծակներ չկամ, յերը նու վոչ վորի վարակ-
ման պատճառ չի կարող զատնալ:

Մալարիայով հիվանդը չպետք ե մոռնա, վոր զարունը
բացվելուն պես մոծակները զարթներու յեն իրենց քնից,
կծելու յեն իրեն, վարակիվելու յեն իրենից և նետո եր,
կծելով առողջներին, վարակելու, են նրանց հա:

Ամեն կերպ պետք ե աշխատել, վոր մալարիայով հի-
վանդներ քիչ լինեն, մանավանդ այն ակղերում, վորտեղ
մոծակներ շատ կան:

Ի հարկե, յեմեն նար լիներ ահզատուխել մալարիայով
բարը հիվանդներին մի այնպիսի ակզ, վորուզ մոծակներ
չկամ, զա կը լիներ ամենալով միջոցը, բայց զա զրժ-
րխտարար անհնար ե:

Արեան բժշկենք մալարիայով հիվանդներին վոչ թե
միայն նրանց բժշկելու համար, այլ վարակվածների թիվը

պակասեցնելու համար, վոր ուրիշները չը վարակվեն նրան-
ցից, այսինքն մալարիայի տարածման առաջն անելու
համար:

ՈՒՄ ՀԱՄԱՐ ՇԱՏ ՎՏԱՆԴԱՎՈՐ Ե ՄԱԼԱՐԻԱՆ

Մալարիան սամակի ազգում և նղի կանանց արգան-
դում յեղած պաղի վրա: Մալարիայի մանրեն արգանդում
զանվազ պաղի համար շատ մեծ թույն եւ Մալարիա տա-
րածված տեղերում ծննդարերությունը շատ և պակասում,
նղի կանայք մալարիայի ազգեցության տակ հաճախի վի-
ժամ են յերեխային: Բայց այս բոլորի հետհանքը՝ աղջա-
րնակության աճումը թուլանում և աղջաբնակությունը
պակասում եւ:

Ի՞նչ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ

Պետք ե բժշկել նղի կանանց, ճահճուա տեղերում, մա-
լարիա տարածված տեղերում նղի առողջ կանայք պետք
և շարունակ ընդունեն քինարինա շատ մանր չափերով,
վոր չիվանդանան:

Փողովրդի մեջ շատ և տարածված այն կարծիքը, թե
քինարինան վիժեցնում ե արգանդի պառողը, նղի հի-
վանդ կնոջը քինարինա չեն տալիս որերաք, շարաթներուն,
բժշկի մոտ չեն անուում, բժշկին չեն հրավիրում, վոր
քինարինա չնշանակի: Բոլորովին մասնաւում են, վոր
մալարիայի մանրեն պաղի համար ամելի մեծ թույն ե,
վոր արգանդի պառուզը անսաման կվիճիքի, յեթե պաղի
մայրը մենա հիվանդ յերկար ժամանակ, հիվանդ նղի
կնոջ աջակատագներն ու մերձակուները բոլորովին զի-
տեն, վոր մալարիան այնպես և բայրայելու կնոջ մարմի-
նը, վոր նա կարող ե վերջնականութեա զրկիւ նղի լինե-
լու և մայր լինելու բազը պարականությունից:

Անու այս տեսակեալից կտրականութեա պնդում ենք,
վոր սխալ և նղի կանանց չը բժշկելու հիվանդ նղի կինը
պետք և նույնակես բժշկին, ինչպես և մեացած հիվանդ-
ները, մանավանդ վոր, ինչպես բազմաթիվ վորձերը

ցույց են ավել, քինարինան վոչ մի վնաս չի հասցնում
հղի կնոջը:

Ի՞ՆՉՈՐԵՍ ԿՈՏՈՐԵԼ ՄՈՇԱԿՆԵՐԻՆ

Մարարիայի տարածման գեմ կովելու միջոցներից
մեկն ել մոծակների վոչնչացումն է:

Դիմում ենք մի շատ գժվար խնդրի՝ կոտորել մո-
ծակներին: Բոլորն ել լավ գիտեն թե վորքան գժվար բան
է, յերբ մոծակները միլիարդներով լցնում են ողը, յերբ
նրանք մանում են քիթդ, բերանդ, ականջներդ ու տչ-
քերդ: Յեկ իրոք, ճահճու տեղերում կյանքը զանում և
անտառնելի՝ մոծակների շնորհիվ:

Ով յեղել ե ճահճու տեղերում, ով ապրել է բրնձա-
շատ տափարակում, գիտե ինչ բան է մոծակների յերա-
մը: Յերեկոները մոծակները խմբերով դուրս են գալիս
ցերեկվա իրենց թագսայան տեղից, պարում են շուրջդ,
հարձակվում վրադ և անխնա կծում: իսկ լուսաբացին
դարձյալ իմբերով ու յերգելով մանում յեն սենյակ:

Կա արդյոք հնար կոտորելու բոլոր մոծակներին,
յերբ յուրաքանչյուր եղ մոծակը ամառվա ընթացքում տա-
լիս և միլիոնավոր սերունդ:

Այս, յեթե գործադրենք ստորև բերած միջոցները և
միհնույն ժամանակ ոգավինք բնության տված միջոցնե-
րից:

Ի՞ՆՉՈՐԵՍ ԿՈՏՈՐԵԼ ՄՈՇԱԿՆԵՐԻՆ ԶՄԵՐԸ

Մենք արդեն զիտենք, վոր աշնանը ձվերից դուրս
յեկած նոր մոծակները ժողովում յեն մի վարեկ մութ
անկյուն, թաղ կենում մինչև գարուն և ձմեռում
այգանդ: Գյուղերում մոծակներն ընտրում յեն խրճիթ-
ները, գոմերն ու մարագները և այլն, մանում նրանց ան-
կյունները, կուչ գալիս և սպասում գարնան գալուն:

Ահա ձմեռը ամենամեծ ուշադրությունը պետք է դար-

ձնել թե բնակարանների մութ անկյունների և թե գոմե-
րի ու մարագների անկյունների և առաստաղների վրա և
աշխատել կոտորել մոծակներին հենց ձմեռը նրանց քնած
ժամանակ:

Այդ նպատակով ծուխ են զնում բնակարաններում,
զոմերում, մարագներում և նկուղներում, զրա համար
պետք ե ամուր փակել լուսամուտներն ու զոները, կալ-
նել բոլոր ծակերը, նույն իսկ և ամենափոքրերը և շենքի մեջ
վառել մի վարեկ հատուկ ձար, որինակ քուգուրթ կամ
մի ուրիշ ուժեղ ձար: Ծխից մոծակները բոլորն ել շշմում
են, այդ զրության մեջ պետք և նրանց տվելով ժողովել
առաստաղներից, անկյուններից և զետնից ու ձգել կրակը:

Յուզուրթ վառելիս վերցնում են սենյակի համեմատ
մի կտոր քաւզուրթ, զնում են թափոյի մեջ սենյակի մի
բարձր տեղում և վասում, ծուխը բարձրանում և վեր և
կոտորում մոծակներին, քուգուրթից ստացած զազը կո-
տորում և մոծակներին բոլոր միջոցներից լավ: Շենքի յու-
րաքանչյուր մեկ քառակուսի մետր տարածության հա-
մար հարկավոր և վերցնել մոտ 3-4 զրամ (մոտ մեկ մըս-
խալ) ըստգուրթ, այդ եժան և հարմար միջոցավ հեշտու-
թյունը կարելի յե ազատվել մոծակներից: Յուզուրթի ծուխ
տալիս շենքում չը պետք ե լինեն մարդ և կենդանիներ:
1-2 ժամ ծուխը շենքում պահելուց հետո բաց անել զըռ-
ներն ու պատուհանները, վոր ծուխը բաշվի ու հետո մար-
րել շենքը սպանված մոծակներից:

Յերեկմն զործ են ածում զահազան ախտահանիչ և մի-
ջահաներին սպանող միջոցներ, վորուր մի սուանձին զոր-
ծիքով ցանում են շենքի պատերն ու առաստաղները, մո-
ծակները շշմում են, այդ զրության մեջ նրանց սրբում
են ավելով և ձգում են կրակը:

Ախտահանիչ և միջատ սպանող հեղակների փոխարեն
կարելի յե գործածել և սովորական ջուր, և ու սապոնա-
ջուր: Մոծակները ըսից թրջվում են և կզշում պատին,
վորից հետո հեշտ և նրանց սրբել-ժողովելն ու կրակ ձգելը:

Զմեռը մոծակներին կարելի յէ կոտորել և կրակով։ Փայտի վրա նայթով թրջած շոր են վաթաթում, վասում են այդ շորը և այրում առաստավին և անկյուններին կրպած մոծակներին։ Այդ միջոցը միայն շատ վտանգավոր և հրդեհի տեսակետից։

Բայց բազմաթիվ մոծակներ կան, վորոնք ձմեռում են բարի տակ, արքադների մեջ, չորացած խոտի, տերեների մեջ, ծառերի փշակներում և այլն բացողյա տեղերում, վորտեղ վոչ մի գաղ և վոչ մի հեղուկ ներգործել չի կարող. այդ մոծակների դեմ պետք և կովել ամսոր։

Ի՞ՆՉՈՐԵՍ ԿՈՎԵԼ ՄՈԾԱԿՆԵՐԻ ԴԵՄ ԱՄԱՌԸ ԲԱՑ ՈԴԻ ՄԵԶ

Նախ և առաջ պետք և առնաք, վոր մոծակներն յենթարկում են բնության որենքներին ինչպես և մյուս կենդանիները. մոծակների թիվը անհամեմատ շատ կլիներ, յեթե բնությունը չը ստեղծեր նրանց թշնամիներին, վորոնցից և պետք և ոգովի մարզք։

ՎՈՐՈՆՔ ԵՆ ԱՊԾԱԿՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Մոծակների ամենազլվածվոր թշնամին չղջիկներն են, վորոնցից շատ կան և Հայաստանում. չղջիկը դիշերվաթոշում ե, վոր մկան նման ե, ունի թեկեր ու սուր աչքեր։ Չղջիկները ցերեկը չեն յերեսում, թագեն կենում մի վորեե մութ տեղում, իսկ յերեկոյան դուրս գալիս մոծակների վորսի և անխնա կոտորում նրանց. Բառիայում մեծ չափ ոգովում են այդ կենդանիներից։ Ճահճոտ տեղերում ճահիճների մոտ չղջիկների համար ասիստակյա բարձր և մութ պատշգամբներ են պատրաստում և հնարավորություն են ստեղծում գրանով չղջիկների համար ցերեկն անցկացնելու. չղջիկները յերեկոները դուրս են զալիս և վորսում մոծակներին։

Չղջիկներ մեզանում ել շատ կոն և անմատթյուն կը լիներ նրանց վասելի. Արդի՛ նրանք վեառ չեն առլիս, լույսից վախչում են և վորսում միայն դիշերվան մի-

ջանակներին, ի թիվո վորոց և մոծակներին և անխնա կոտորում։ Պետք և ոգովել նրանց ծառայությունից։ Նրանք անգնահատելի յեն մոծակների դեմ բաց ողի մեջ տարփող կովի համար։

Բնությունը մի ուրիշ միջոց ել և տվել մարդուն. հայանի յե, վոր մոծակները ճահիճներից 2-3 վերստ ավելի հեռու չեն թոշում. ուստի պետք և աշխատել բնակվել ճահիճներից 2-3 վերստ հեռու. պետք և աշխատել բրնձի գաշտերը 3 վերստ հեռու լինեն բնակելի տեղերից, վոր մոծակները հեռու լինեն։ Այդ նպատակով Հայաստանի ժողկոմիսորնը հրատարակել է գեկրետ բրնձի գաշտերի մասին։

Հ. Ա. Խ. Հ. Ժողովրդական Կոմիսարների խորհրդի
Մալարիայի դեմ կովելու միջոցների մասին
1923 թ. մայիսի 21

Բրնձի մշակում (չալթուկի արտեր)

Չալթուկի ցանքերը պետք և լինեն՝

ա) Յերեան բաղարի բնակելի մասերից առնվազը հինգ վերստ հեռու։

բ) Հայաստանի մասցալ վայրերում քաղաքներից, զյուղերից, յերկաթուղու կայարաններից և առհասարակ բնակության վայրերից առնվազն յերեք վերստ հեռու։

գ) Առնվազն յերկու վերստ հեռու զիխավոր խճուղիներից

դ) Առնվազը մեկ վերստ հեռու մյուս հասարակ ճանապարհներից և յերկաթուղագծից։*)

Մալարիայի դեմ կովելու տեսակետից այս գեկրետը մեծ նշանակություն ունի, վորովհետեւ չալթուկի ցանքերը ուրիշնետական ճահիճներ են հանդիսանում և շատ նպաստում են մոծակների զարգացմանը, ուստի նրանք պետք

*) Ծանոթություն. — Այն գեպքերում, յերբ բնակավայրերը գտնվում են առողջ (մալարիայի տեսակետից) բարձրավանդակների վրա, չալթուկի ցանքերը կարող են գտնվել մի վերատից վոչ պակաս հեռավորության վրա։

Ե հեռու լինեն բնակելի տեղերից, վոր բնակիչները մոծակ-
ներին զոհ չդառնան:

Մոծակները մի հատկություն ևս ունեն, այդ հատ-
կությունը վաղուց հայտնի է մարդուն: Մոծակները բարձր
չեն թոշում. մարդիկ բնակարանների մոտ պատշգամբներ են
շինում և գիշերն այստեղ են անցկացնում: Այդ միջոցի
մասին մենք արդեն խոսել ենք և ավելորդ ենք համարում
նորից այստեղ խոսելը:

Ծխով մոծակներին վոչնչացնելը նոյնպես զիտենք:
Մարդիկ բնակարանների մոտ խարույկներ են վառում,
տարթ են վառում և ծխախեղդ անում մոտակա մոծակ-
ներին:

Կան տեղեր, վորակեղ մոծակների վոչնչացման հա-
մար գործ են ածում հատուկ պատրաստված արկղներ: Փայտից
արկղներ են պատրաստում և կախ են տալիս
սենյակների անկյուններում: Մոծակները լուսաբացին ժո-
ղովում են արկղների մեջ, ցերեկը պետք մտքրել այդ
արկղները մոծակներից մի վարեւ քիմիական նյութով
կամ թեկուղ հենց ջրով ու հետո նորից կախել արկղները
իրենց տեղը:

Այդ նպատակով կարելի յե զործածել և թուղթ, վորի
յերկու յերեսին կազուն հեղուկ և քսված: Թուղթը կա-
խում են սենյակների անկյուններում և առաստաղից: մո-
ծակները լուսաբացին սենյակ են մանում և սկսում նըս-
տառել թղթի վրա: Կազում են հեղուկին, այլևս պոկ չեն
գալիս ու սատկուամ: Թուղթը լցվելուց հետո, պետք
այրել և նորը կախել:

Այս բարբր զործագրվում են մոծակների գեմ, բայց
կան և միջոցներ, վորոնք զործագրվում են մոծակների
թրթուրի գեմ, նրանց ձվերի գեմ:

ՎՈՐՈՆՔ ԵՆ ԱՅԴ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սկսենք ձվերից:

Մենք արդեն գիտենք, վոր մոծակները ձու յին ածում

կանգնած ջրի յերեսին, նրանք կարող են ձու ածել շար-
ժուն ջրերի այն տեղերում, վորակեղ ջուրն արագ հոսանք
չունի, սրինակ՝ առուների յեզրներին: Մոծակները կարող
են ձու ածել ջրափոսերի յերեսին, լճակների ջրերի յերե-
սին, մինչև անզամ անձրեաջրի տակասի մեջ յեղած ջրի
յերեսին, միայն ջրի խորությունը մեկ մետրից ավել չը
պետք ելինի: Մի խոսքով վորակեղ կանգնած ջուր կա, թե-
կուզ մի փոքրիկ ամանի մեջ, մոծակները մի քանի որից
հետո ձու կդնեն:

Ի՞ՆՉ Ե ՀԵՏԵՎՈՒՄ ՄՐԱՆԻՑ

Աշխատել վոր բնակության վայրի մոտ, մանափանդ
բակում և պարափզում կանգնած ջուր ըլ լինի, ջրսկ տա-
կաս, կամ մի վարեկ աման առանց ծածկելու ըլ լինի:

Պետք ե չորացնել ջրափոսերը հողով կամ մոխրով:
զնացկան ջրի յեզրները մաքրել բույսերից, վոր ջուրը կանգ
չառնի և նպաստավոր պայման չստեղծվի մոծակների
ձու ածելու համար՝ նույնպես և պետք ե հետեւ, վոր
պարտեզներն ու արտերը ջրելիս ճահճճներ ըլ գոյանան:

Պետք ե չորացնել ճահճճները, անցկացնելով կանոնա-
վոր առուներ և պիտանի զարձնելով հողը պետքական
մշակույթների համար:

Իտալիայում գեռ վաղուց հայտնի յեր, վոր ճահճճները
կարելի յե չորացնել և հողը պիտանի զարձնել յերկրա-
զործական պիտույքների համար: Այդ պատճառով ճանը
հարկեր են դնում անինամ և անմշակ մնացած հողեր
ունեցողի վրա և ընդհակառակը պարզեատրում են այն
անձանց, վորոնք մշակում: Են խոպան տեղերը և պետ-
քական զարձնում յերկրագործության համար: Այն ժա-
մանակ չգիտելին մալարիայի պատճառը, բայց հասկա-
նում ելին, վոր մալարիայի գեմ կավելու ամենալավ մի-
ջոցը պարապ և ճահճուա տեղերի մշտկումն ե յերկրա-
զործության համար պետքական զարձնելն ե:

Այժմ, յերբ գիտենք մալարիայի պատճառը, և գիտենք

Նրա տարածման միջոցները, գիտենք և կովելու միջոցները, այժմ առաջել ես հարկավոր և չորացնել ձահիճները, վորպեսզի մոծակները հնարավորություն չունենան ձու ածելու:

ԻՆՉՊԵ՞Ս ԿՈՎԵԼ ԹՐԹՈՒՐՆԵՐԻ ԴԵՄ

Մենք գիտենք, վոր մալարիա տարածող մոծակի թրթուրը պառկում և ջրի յերեսին հորիզոնական գծով և ոդ և շնչում այդ դրության մեջ։ Փորձերը ցույց են տվել, վոր յեթե մի վորեկ յուղ լցնենք ջրի յերեսին, յուղն արգելում և թրթուրի շնչելուն և դրանից սատկում ենա։

Այդ նպատակի համար ամենաեժան միջոցը՝ կանգնած ջրերի յերեսին նավթ լցնելն է. նավթը բարակ շերտով ծածկում և ջրի յերեսը և խանգարում թրթուրին ոդ շնչել։ Թրթուրը սատկում և և նոր մոծակ չի գոյանում։ (տես նկար 7):

ՆԱՎԹԻ ԶԱՓԸ

Յուրաքանչյուր քառակուսի մետր ջրին վերցնում են 10 մսխալ նավթ. զրա համար կա առանձին զործիք, վորը կոչվում և հիգրոպուլտ

Ահա նավթ լցնելու ողտի մի որինակ՝ Յեզիկասոսում մի փոքրիկ քաղաք կա, իզմայլիին անունով. նա 1900 թ. ուներ 6000 հոգի մողավորդ. զրանից 2250 հոգին այդ տարին հիվանդացել են մալարիայով։ Յերկար վարոնումներից հետո զտան, վոր պատճառը ձահիճներն են և 1903 թվին սկսեցին նավթ լցնել այդ ձահիճների ջրի յերեսին։

1903 թվին հանկարծ իջավ մալարիայով հիվանդացողների թիվը և 214 հոգի եյբն հիվանդացել. 1904 թ.՝ 80 հոգի, 1905 թ.՝ 37 հոգի և 1906 թ. վոչ վոր։ Ահա թե վորքան մեծ ողուտ և տալիս կանգնած ջրի յերեսին նավթ լցնելը։



ՆԿԱՐ 7. ՃԱՀԻԳԻ ՎՐԱ ՆԱՎԹ ԿՑԱՐ Ի ՑԱՆԿԱՅԻ

Փոքր տարածության կանգնած ջրերի վրա նավթ
լցնելը թե եժան և և թե նպատակահարմար:

Բայց մեծ տարածության ճահիճների վրա դա ան-
կարելի յէ: Այդ գեղքերում կարելի յէ թունավորել ջուրը
զանազան թույներով, ի հարկե այնպիսի թույներով, վա-
րոնք մարդու և կենդանիների համար անվնաս են:

Կան տեղեր, վորտեղ մոծակների թրթուրը վոչնչա-
ցնելու համար գործ են ածում միջատ սպանող բույսեր:
Կանգնած ջրերի ափերի մատ բուցնում են միջատասպան
բույսեր և այսպիսով վոչնչացնում մոծակների թրթուրները:

Մոծակների թրթուրները սպանող կենդանիներ ևս
կան, վորոնց ծառայությունից ևս պետք է ոգավել:

Այդ նպատակի համար ճահիճներում բուծում են
ջրի բզեզներ, գորտեր և մանր ձկնիկներ վորոնք կերակըր-
վում են հատկապես մոծակների թրթուրներով:

Ահա բոլոր այն միջոցները, վորոնք գործազրպում
են մալարիայի տարածման դեմ:

Նախազգուշական միջոցներն են 1) անձնական նա-
խազգուշական միջոցները 2) հիվանդների բուժումը և
3) մոծակների կոստրումը:

Յուրաքանչյուր տեղում պետք է գործազրել նրան
հարմար միջոցը:

Իսկ զլամագոր հաջողությունը կայանում և նրանում,
վոր սանիտարական խմբակներին պետք է սպնի ազգաբնա-
կությունը, ինքը ազգաբնակությունը պետք է ունենա
զիտակցություն գործազրելու բոլոր հիշած միջոցները,
վորակների ազատիքի մալարիայից՝ հայտառանիի այդ մեծ
պատուհասից:



3781

ՀՀ Ազգային գրադարան



NL0273888

7107

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.